



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

No 1009-ՂԻ/2

«07» 08 2020թ.

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0718.11.5 «ՀՐԵԶ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ  
ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
0718.11.01.5 «ՏԵԽՆԻԿ՝ ՀՐԵԶ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. մարտի 22-ի թիվ 333-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 19-րդ կետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1320-Ա/Ք հրամանի 3-րդ և 4-րդ կետերը, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. օգոստոսի 10-ի N 777-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը՝

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ


1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 0718.11.5 «Հրեզ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության 0718.11.01.5 «Տեխնիկ՝ հրեզ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և նորոգման» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
2. Միջին մասնագիտական կրթության 0718.11.5 «Հրեզ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության 0718.11.01.5 «Տեխնիկ՝ հրեզ-

փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և նորոգման» որակավորման պետական կրթական չափորոշիչը փորձարկման նպատակով 2021-2022 ուսումնական տարվանից սկսած մեկ պարբերաշրջան ներդնել տվյալ մասնագիտությամբ լիցենզիա ստացած երկուսից ոչ ավել ուսումնական հաստատությունում:

3. «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի գործադիր տնօրենին՝ ապահովել չափորոշիչ փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:
4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին:

Նախարար

Արայիկ Հարությունյան

 Invalid signature

X 

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378